



ՕՐԱԿԻՒ

# ԲԱՐՁՐԱԿԱՆ, ԲԱՆԱՍՏՐԱԿԱՆ ՏԵՍԵՍԵՐՆԵՐ ԵՎ ԲՈՅԵՐՆԵՐ

ԳԻՏԵԼԵԱՑ

ԺԱ. ՏԱՐԻ ԹԻՒ 7.

1853

ԱՊՐԻԼԻ 4.

## ԲԱՐՁՐԱԿԱՆ

Մարդաս դատաստանը Աստոմոյ դատաստանէն տարրեր է :

ԴԻՄԱ ամէն կարգացող և լսող այս ըսածներուս իրաւունք կու տան , բայց զարձեալ կը տեսնես որ ամէնքը մէկ բերան բայց սանէ , բայց նանէ ըսելով՝ կը սկսին ջանալ որ զիրենք այս մարդկանց կարգէն գուրա սեպէն : Ո՞ւեկ բայց մըն է , ամենուն բերնէն կը լսուի , և այն բայցը ամէն խօսք , ամէն ջանք պարապ կը հանէ . և ամէն խոռվութիւնները ու շփոթութիւնները իրենց առջի վիճակին մէջ կը մնան : Եւ ամէնքն ալ կ'ենթազրեն թէ իրենք հասկըցեր են զայս

1 ՏԵՍ ԵՐԵ 65 :

Ճշմարտութիւնը , և կը մնայ ուրիշներուն ալ հասկըցընել , և այսպէս ոչ ոք կը հասկընայ . որով անհնարին կ'ըլլայ այս սխալմունքներուն դարմանը : Եթէ այսպէս է , ես գոհ կ'ըլլայի եթէ գոնէ ձանձնայինք ամենքնիս ալ այս տկարութիւն բռնուած ըլլանիս : Բայց ես մէկ ուրիշ հնարք մը ըսեմ քիչ մը աւելի տեղովը հասկըցնելու համար , թէ ոչ ամէն մարդու՝ գոնէ շատերու , այս բնական մարդկային մտաց սովորութիւնը , որ ուրիշի ծուռ դատաստան ընող ըլլալը կը ձանձնայ , ու ինքը միշտ ուրիշի վրայ ծուռ դատաստան կ'ընէ , ամէն մտածու-

թիւն, խօսք և գործք գէջի մեկնելով. իսկ իր անձին գործքերը անոր ներհակ ամէն անգամ ստութեամբ աղէկի տեղ դնելով : Ուստի ես որ հիմա կը զրեմ, դու որ հիմա կը կարդաս, մենք երկուք նիս եթէ կ'ուզենք մեր մոտաց դատաստաններուն ծուռթիր հասկընալ, երբ ես քու վրադ կը մտածեմ ինչ և իցէ կողմանէ, թէ բարուցդ, թէ սովորութեանդ, թէ խօսքերուդ, թէ գործոցդ և թէ դատմանդ վրայ, փոխանակ միտքս դնելու թէ ես քու վրադ կը մտածեմ, պէտք է սեպեմ թէ ես երկու մարդու կարողութիւններ ունիմ, երկու մարդու միտք, դատմունք, կամք, յօժարութիւններ, բարքեր, սովորութիւններ, և այլն . մէկ խօսքով՝ ես երկու մարդ եմ. առաջին՝ եմ այն մարդը ինչ որ դուն ես, և գործեր եմ, խօսեր եմ, մտածեր եմ այն ամէն բաները ինչ որ դուն ըրեր ես . և երկրորդ մարդն եմ բուն ես . այսպէս ըլլալով, որովհետեւ բնականաբար ես զիս չեմ ատեր, և իմ ամէն մտածութիւնս և գործս աղէկի կը մեկնեմ . ուստի այսպէս զիս ինձմէ և քեզմէ շնած մարդ մը ենթադրելէն ետեւ, երբ կ'ուզեմ քու մէկ բանիդ վրայ դատաստան ընել, կը սկսիմ մտածել թէ իմ ընելու դատաստանս իմ առաջին անձիս վրայ է : Համարինք թէ քու վրադ կեղծաւորութեն գործ մը տեսայ, կը սկսիմ դատաստան ընել իմ առաջի անձիս վրայ, քու բնութիւնդ, քու խելքդ իմս սեպելով : Դու ալ որ իմ վրաս կ'ուզես դատաստան ընել, դու ալ իմ անձս քու վրադ առաջին անձն սեպէ . ու այնպէս սկսինք իրարու վրայ դատաստան ընել դատաստաններնուս քննութիւնը մեր անձանց վրայ ընելով . և կը տեսնենք թէ այն բաներն որ առաջ իրարու վրայ պակսութիւն կը կարծէինք, կը սկսինք արդարացնել ըսելով . “ Իմ առջի անձս այս բնութիւնն ունի, անոր համար կը հարկաւորի այսպէս ընելու . . . և շատ բաներն ալ որ առաջ պարսաւելի կը կարծէինք, կը սկսինք գովել . ուրիշ ըրածները՝ որ մեզի չարութեամբ եղած կ'երմենային, ոչիտութեամբ ըրած

գտնենք, ու շատ անգամ ալ կ'արդարացնենք ըսելով թէ առջի անձերնուս սովորութիւնները, պարագայները, առիթները կը հարկաւորեն զիրենք այնպէս ընելու : Ի՞սա այսպիսի դատաստան ընելով կը սկսիմ ես քեզի հետ սիրով վարուելու, դու ալ ինձի հետ նոյնպէս . և ոչ երբէք մէկին իրարութիւններին վրայ դատաստան կ'ընենք, այլ իրարու դէմ եղած բան մը տեսածնուս պէս, կը սկսինք հարցնել քննել, միշտ աղէկի մեկնելով, և միշտ զիրար արդարացնել ջանալով :

Ի՞սա մէկ հատիկ ձար՝ ծուռ և սիսալ մտաց դատաստանը ընկերութեան մը մէջէն վերցնելու : Աւ եթէ ամէն մարդիկ այսպիսի դատաստանով ուրիշ մարդկանց վրայ մտածեն, այն ատեն տես թէ ինչ խաղաղութիւն և ինչ հանգըստութիւն կը թագաւորէ ընկերութեց մէջ . գժուարութիւնը կը մնայ զայս սովորութիւնը ’ի գործ գնելուն վրայ :

Այս հնարքն ալ հիմա շատերուն անկարելի պիտի երևայ՝ ըսելով, թէ ուրիշ օտար և ինձ հակառակ եղող մարդուն անձը, բնութիւնը, ըրած գործքերը ինչպէս կ'ըլլայ իմ վրաս սեպել . չկրնալով այս բանիս խելք հասցնել որ իրենք անոնց տեղը եղած ըլլային, անոնց բնութիւնները, սովորութիւնները ունեցած ըլլային, գուցէ անոնց ըրածէն ալ, որ հիմա իրենց զէշ կ'երևայ, իրենք աւելի գէշ կ'ընէին :

Այս մենք այսպահս հասկըցնելէն ետեւ՝ թողունք որ քիչ մըն ալամէն մարդինք իրեն խորհրդածէ, ու իր մտաց դատաստանը կարգի դնէ : Այս ամէն կարգացողներն և լսողները չասկընան, ես կարծեմ որ շատերը կը հասկընան . և այն շատերուն մէջ կը գտնուին այնպիսիներ ալ, որ այս տեսակ դատաստանին օգտակարութիւնը ճանչնալով թէ իրենց անձին համար, և թէ ընկերութեան համար, և բնութեամբ ալ բարեսեր ըլլալով՝ կը ջանան ’ի գործ գնելու : Այս ալ մեծ օգուտ մըն է ընկերութեան, որ շիտակ դատաստանով մը՝ ընկերութեան մէջ ծուռ դա-

տաստան ընողներէն պատճառած չարեացը առջևը առնեն :

Ո՞իայն մէկ քան մը կայ որ աւելի վախ և ցաւ կը պատճառէ բարեսիրաց սրտին՝ այս շիտակ դատաստան ընելու ձամբան ամէնքը չհասկընալուն համար : Որովհետև հիմա դիւրացեր է մարդկանց իրենց մտաց դատաստանը հրապարակելու, և ամէն տգէտներու ալ հաղորդելու ձամբան տպազլութե միջոցաւ, անոր համար կրնայ պատահիլ, որ թէպէտ քիչ անձինք ալ մնացած ըլլան շիտակ դատաստան ընել չփիտցողներ, այն քիչէն ոմանք տգիտութեամբ իրենց մտաց ծուռ դատաստանը շիտակի տեղ հրատարակեն . և այնպէս շատ մարդիկ չփիտնալով ան զրողներուն ծուռ դատաստանի տէր ըլլանին, հաւտալով կարդան և սխալելով խռովին . և անոնք ալ իրարու պատմելով կարդացածնին, բոլոր ընկերութիւնը տակնուվրայ ընեն : Ո՞չա այսպիսով ինչ մեծամեծ չարիքներ չկրեց Խւրոպա այս դարուս մէջ . որչափ մահեր հոգւոյ և մարմնոց չպատահեցան ինչուան այսօր :

Եյսպիսի մեծ չարեաց ալ առջևը առնելու ջանացեր են քանի մը տէրութիւններ . և հիմա զրեթէ ամէնքը մէկ խօսքով այս չարեացս առջևը առնելու կը հոգան՝ սահմանելով որ իրենց տէրութեան քաղքներուն մէջ ինչ որ կը տպուի՝ տէրութիւնը չքննած, հրատարակելու հրաման չարուի և յանցաւորը պատժուի : Ո՞չա այսպէսով շատ վնասակարութիւններ սկսան դադրիլ : Կակ մեր ազգը . . . այլ չեմ ուզեր երկնցընել այս նիւթիս վրայօք . թող ազգին մեծերն ալ իրենց պարտքը մտածեն . որոնք որ ազգին աղէկութիւնը չըսեմ մեզմէ աւելի, այլ մեզի պէս կ'ուզեն :

Ինչուան հիմա խօսածնիս առանձին մարդկան մտաց դատաստանին վրայ էր, որուն մէջն են խմաստուններն ալ տգէտներն ալ, ամէն տեսակ մարդիկ : Հիմա տեսնենք դատաստան ընելու իշխանութիւն ունեցողները . կ'երեայ որ ասոնց սխալմունքը քիչ պիտի ըլլան, ո-

րովհետև ըրած դատաստաննին ուրիշի գործոցը իրենց անձանց հետ բաղդատութիւն չէ, այլ երկու օտար մարդկանց իրարու դէմ ըրած ծուռ դատաստանը՝ իրենց անձանց վերաբերեալ ըլլալով, այնչափ աւելի դժուար ըլլալը գործքով կը տեսնուի : Ծնէպէտ խորունկ մտածելով ալ կ'իմացուի՝ որ առանձին մարդկանց դատաստանէն հաղար անգամ աւելի դժուար է այս իշխանութե դատաստանը . և դժուարութեան մէկ մեծ մասն ալ այս է՝ որ առանձին մարդկանց պէս դատաստան ընելէն փախչելով ազատիլ ըլլար, այլ 'ի պաշտօնէ ստիպուած են ընելու :

Հիմա մտածէ ուրեմն, ով սիրելի ընթերցող . այն մարդն որ իր առանձին մտաց դատաստանին մէջ սխալելու հետ է, ինչպէս որ տեսանք չսխալելու անհնարին դժուարութիւնները, որուն կանոններուն շատերուն խելքն ալ չհաս նիր՝ երկայն բարակ պատճառներով ալ հասկըցընելէն ետքը . հապա մէկն որ այն կանոնները չէ թէ միայն չկրնալով պահել, այլ և չփիտնալով՝ եթէ ծուռ դատաստան ընելու հետ է, երբ սկսի օտար անձանց մէջ խաղաղութիւն ձգելու համար, անոնց մէջերնին ունեցած դատաստանը քննել ու շիտակն որոշել . ինչ մեծ դժուարութեան մէջ ընկած կ'ըլլայ այն մարդը :

Դնենք թէ երկու մարդիկ իրենց առանձին դատաստանին մէջ սխալող իշխանի մը առջև ելան՝ որ իրենց դատաստանը տէսնէ . յայտնի է թէ այն երկուքը իրարու նման չեն . տեսքերնին, խօսքերնին, քաղաքավարութիւննին, շարժմունքնին, նայուածքնին, մէկ խօսքով ամէն բաներնին : Ոյւ շատ անգամ ալ կը հանդիպի՝ որ անոնց մէկը իրեն ծանօթ է, կամ իրեն ծանօթ մարդուն ազգական կամ բարեկամ է . ուստի բնականաբար այն երկու մարդիկը առջեւը տէսածին պէս, իր բնական յօժարամտութենին բռնադատուած, սխալ դատաստան մը կ'ընե անոնց վրայ իր

մատոցը մէջ . և այն ծուռ դատաստանը կ'ըլլայ հիմն իրեն իշխանութեամբ ընելու դատաստանին , և այնպէս ուզէ չուզէ շխտակ դատաստան չկրնար ընել : Ինքը հազար քննութիւններ ընէ , դարձեալ իր յօժարանութիւնը ծանրըցած կողմը արդար կը տեսնէ . ահա այս է պատճառը որ այնչափ անիրաւ դատաստաններ կ'ըլլան աշխարհիս մէջ ամէն տեղ : Աւ ասոր համար է՝ որ դատաստանի ելլող մարդիկ տեսակ տեսակ հնարքներ կը մտածեն իրենց կողմը արդար երեցընելու համար . որոնցմով խիստ շատ անգամ կը յաջողին : Դրաջին խիստ անիրաւ և բոլորովին խաբող ձամբան է դատաւորին ընծայ տալը , անոր յօժարամտութիւնը իրենց կողմը ձգելու համար : Աւ այս ընծային զօրութիւնը խելքէ զուրս սաստիկ է . այնպէս որ՝ որչափ ալ արդար ըլլայ դատաւորը , իր կամացը դէմ ընծայն զինքը կը սիսալցընէ , ձար չկայ : Ինոր համար յարոպայի ամէն աէրութեանց մէջ դատաւորին ընծայ առնելը խիստ մեծ յանցանք սեպուած է , և մէկէն կ'իյնայ իշխանութենէն : Ա ան զի ընծայ տուողին , մարդուս անձնասիրութիւնը գգուելովներքին գաղտուկ երախտապարտութեան զգածմունք մը կ'ունենայ , որ ալ չկը նար այն ընծայ տուողին վրայ ձշդութք քննութիւն ընելու . իբրև եթէ սրտին մէջէն կ'ըսէ ինք իրեն , նա իմբարիք կ'ուզէ , ընծայով առջես կ'ելլէ , ես ինչպէս անոր չարիքն ուզեմ . եթէ նա չար մարդ ըլլար , ինձ ալ բարիք ընել պիտի չուզէր : Այս գաղտուկ զգածմունքը մտաց վրայ այնպէս կ'իշխէ , որ անկարելի է անոր դէմն առնել : Ինոր համար շատ անգամ պատահէր է , և սովորական գործ է արդար դատաստան ընել ուզող դատաւորներուն , որ երբ մէկը ընծայ տալ կ'ուզէ՝ կը մերժէն , չեն առներ . և եթէ խոստմունք ալ ընէ՝ չեն ընդունիր . և մանաւանդ այն ընծայ տալու յօժարութիւնը՝ անսոց անիրաւութեան նշան մը կը համարին :

Դատաստանը իրենց կողմը ձգելու երկրորդ հնարքն է փնտուել մէկ անձ մը

դատաւորին բարեկամ , ու անոր ձեռքով դատաւորին առանձին հասկցնել իրենց իրաւունքը : Այս սովորական է ամէն դատաստաններու մէջ . և այս է յայտնի նշան մարդուս մտաց բնական սիսալական ըլլալուն , որուն ուրիշ դարման չեն կրցած գտնել մաղիկ , բայց եթէ այս որ դատաւորին հակումը բարեկամի ձեռքով իրենց կողմը ձգեն : Ամէպէտ այս ալ դարձեալ շատ անիրաւ դատաստաններու պատճառ է , բայց շատ դիպուածներու մէջ եթէ զայս զգուշութիւնը չըանեցնեն՝ արդարութիւնը իրենց կողմը ունեցողները , կը կորսնցընեն իրենց դատաստանը . անոր համար ստիպուած են այսպիսի հնարքի ձեռք զարնելու :

Այսպիսի մարդկային տկարութենէ առաջ եկած չարիքը մտածելով յարութիոյ կրթեալ ազգերը՝ իրենց տէրութեան մէջ իրեք այլ և այլ ատեաններ սահմաններ են . ստորին , միջին , և վերին . որ և իցէ դատաստան նախ ստորին ատենին կը ներկայանայ , որուն որոշմանը եթէ չուզէ հնազանդիլ դատուողներուն մէկ կողմը՝ անիրաւ սեպէլավ , իշխանութիւն ունի բողոքելու երկրորդ միջին ատենին . և եթէ նա ալ նորէն դատաստանը քննելէն ետև , ստորին ատենին որոշածն հաստատէ , ալ անկէ ետև պէտք է հնազանդիլ որոշմանը . որոշէտև դժուար կընայ հանդիպիլ որ երկու ատեաններն ալ նոյն սիսալ մտաց դատաստանին հէտեւին : Խակ եթէ երկրորդ ատեանը ստորին ատենին որոշմանը ներհակ սահմաննէ . այն ժամանակը մէկալ կողմինները նորէն կընան երրորդ վերին ատենին բողոքել . և անոր որոշումը անբողոքելի է : Աւ ահա այս ձամբով խիստքիչ կը պատահի՝ որ վերջին որոշումը սիսալ ըլլայ . որովհետև բնական է՝ որ այդպէս ուրիշ բողոքելու ատեաններ գտնուելով , առաջին ստորին ատեանը կը զգուշանայ ծուռ որոշմունք ընելէն . վասն զի զիտէ որ եթէ յանկարծ անիրաւ որոշումն ընէ , զրկուած կողմը իր արդարութենը վստահանալով կը բողոքէ միջին ատենին . ուստի կը

ջանայ արդար դատաստան ընելու , որ եթէ մէկալ կողմը բողոք ալ ընէ , միջին ատեանը քննելով իմանայ՝ թէ ստորին ատեանը արդարութեամբ քննած է . որ ըլլայ թէ իր որոշմունքը սխալ գտնելով ամօթով իյնայ իբրև կողմ բռնող , կամ տկարամիտ : Այսպէս ալ միջին ատեանը մէկ կողմանէ յանձնասիրութենէ բերուած կը ջանայ՝ որ եթէ սխալ կայ ստորին ատենին մէջ՝ ինքը շոկէ . մէկալ կողմանէ ալ կը զգուշանայ որ ըլլայ թէ արդարութենէն խոտորի , ու վերին ատենին առջին ալ ինքը ամօթով մնայ , ստորին ատենին արդար որոշմանը դէմըրած գտնուելով . ահա մէկ հատիկ հնարք արդար դատաստան ընելու : Աւ այս ատեանները բաղկացնող անձինքը այլ և այլ վիճակի մարդկանցմէ կը բաղկանան . ստորին ատեանը ստորին աստիճանի մարդիկ . միջինը միջին աստիճանի , և վերինը ազգին ազնուականներէն կը բաղկանան . որպէս զի ըլլայ թէ իրարու բարեկամ գտնուելով , մէկ ատեանին ծուռ դատաստանին՝ մէկալատեանը աչք գոցէ : Աւ մանաւանդ թէ այլ և այլ ատեանները տէրութեան իւրաքանչիւր գաւառին այլ և այլ քաղաքներուն մէջ կը հաստատեն , որպէս զի իրարու ձանըուր ալ ըլլան : Այս միայն վերին ատեանը բոլոր տէրութեան մէջ մէկ հատ կ'ըլլայ , և այն մայրաքաղքին մէջ , և է այն ամէն գաւառներուն ստորին և միջին ատեաններուն զլուի : Այսց ուր էր թէ մարդիկ առանձին բնութք սխալ դատաստան ընող ըլլանին ձանչնային , ու անոր վտանգներէն զգուշանալ սովորէին , ու կարօտ ըլլային այսպիսի հնարքներու :

Այս երրորդ հնարք մըն ալ դատաստանը իր կողմը ձգելու , որով ամէն ատեաններն ալ կընան խարուիլ . և է այս դատաւորներուն գութը շարժելը անձնական ձիբքերով , խեղջութիւն ձւացընելով , լեզու թափելով , տեսքով , սիրտ քաշող կերպերով . անձնական մտաց դատաստանին սխալմունքը չգիտցող դատաւոր մը՝ որչափ ալ բարեսիրտ և արդար ըլլայ , սնկարելի է որ չխարուի

այս կերպերէն : Այս ձեւացմունքներն են մարդուս դատաստանը՝ պատուծոյ դատաստանին տարբերցնողը , ինձնասիրութենէն ետե զօրաւոր իշխեցող մարդուս սրտին վրայ այս կեղծաւորական ձեւացմունքներն են , որն որ անկարգ մարդկանց սովորական գործքն է : Այնչափ որ կեղծաւորել չգիտցողը՝ չար մարդ չկրնար ըլլալ . կեղծաւորել չգիտցողը կընայ սխալիլ , չար օրինակներէ աւրուիլ , բայց կընայ ալ գիւրաւ ձամբայ գալ երբոր խրատ տուող ունենայ : Այսց կեղծաւորել սովորած մարդը գրեթէ անկարելի է որ անկարգութէն ետ կենայ : Ին կերուե ժանտախտ է կեղծաւոր մարդը , թունաւոր արձան մըն է՝ որուն որ երեայ կը թունաւորէ կը սպաննէ . ընկերու . թեան քակտիչ , բարեկամները իրարութնամայնող , բարի մարդիկը չարացնող . մէկ խօսքով՝ սատանին բոլոր իր հնարքներովն ընել չկրցածը կեղծաւորը մէկ երենալովը և մէկ խօսքով կ'ընէ և կը լինցընէ : Աւե իմաստուն , արդար դատաւորները , որոնք ոչ երբեք յանձն կ'առնեին պատի անիրաւութիւն մը ընելու իրենց դատաստանին մէջ , կեղծաւորներու ձեռքով խարուած մեծամեծ անիրաւունեց պաշտպան կ'երեան :

Այս մարդուս արտաքին երեւութին կեղծաւորական խարեւութիները հասկընալով հին ժամանակը հեթանոսաց խմաստունները , Յունաստան Արիապազին ատեանը կամսն սահմաննեց որ դատաստանի ատեանը գետնափոր նկուղի մէջ ըլլուի մութ տեղ . և յանցաւորին երեսն ալ գոց ըլլայ դատաւորներուն առջեն ելած ատենը , որպէս զի դատաւորաց միտքը չպաշարուի յանցաւորին կեղծեալ հնարքներէն , և գութերնին չչարժի , որ կարենան արդարութեամբ դատել : Աւտի այս կեղծաւորական երեւութին դէմալ ալ այս հնարքը կընայ բանեցուիլ՝ որ դատաստանի եկող անձինք իրենք անձամբ չերեան դատաւորներուն այլ ուրիշի ձեռքով յայտնեն իրենց իրաւունքը : Այսց ամեննեն զօրաւոր գեղի դատաւորաց իրենց մոտաց սխալական ըլլալը ձանցնաան է , և այս մոտաց դա-

տաստանին սխալմունքը շտկելու կամոն  
ները գործածելու ջանալը : Ի՞սյց աս  
բանս ալ որչափ դժուար, ըսեմթէ ան  
հնարին բան է . եթէ այսպէս դժուար  
ըլլար, անիրաւ մարդիկ և անիրաւու-  
թիւնը գլխովին կը հալածուեին ամէն  
աշխարհէս . և ոչ ոք յանձն կ'առնէր ա-  
նիրաւութէ ետևէ ըլլալ. որովհետեւ կը  
գիտնար թէ անանկով ուրիշի վնաս մը  
ընել չկարենալէն զատ, ինքն ալ վեր-  
ջապէս պիտի հալածուի ու դատապար-  
տուի ամենէն . և այնպէսով խաղաղու-  
թիւնը կը տիրէր աշխարհիս վրայ :

Ուստիվերջնենք իսօսքերնուս յայտ  
նելով զայս անստելի ճշմարտութիւնը՝  
թէ ազգի մը, ընկերութեան մը և գեր-  
դաստանի մը մէջ պատահած ամէն չա-  
րեաց, խոռովութեանց, շփոթութեանց  
և աշխարհիս տակն ու վրայ ըլլալուն  
սկզբնական պատճառն է՝ մարդկային  
մտաց ծուռ դատաստանի տէր ըլլալը,  
մարդուս դատաստանին Կ'ստուծոյ դա-  
տաստանէն տարբեր ըլլալը . որուն բոլո-  
րովին շտկուիլը մարդկային կարողութէ  
դուրս, Կ'ստուծոյ միայն հնարաւոր է:  
թիւնը կը տիրէր աշխարհիս վրայ :

Հ.Պ.Մ.

## Բ.Ա.Ն.Ա.ՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԲԱՆԱՍՏԵԴԱՌԻԹԻՒՆ

Քերրողական մահ .

Իւսնաստեղծ մարդու մը համար իրաւամբ ըսուեր է, թէ միայնութիւն չկայ, ամէն բան իրեն համար լեզու ունին, ամէն բան կը խօսին ու կը լսեն: Վ՞նարը որ ասոնց շունչ ու լեզու կուտայ՝ իրեն մէկ հատիկ ընկերն է. ամէն առմի մէջ անթաժան . ուրախութեանցը խնդակից ու տրտմութեանցը սփոփանք: Լ'ո բա-  
նաստեղծի մը վարքը . կը տեսնես որ քաշած վշտերուն ու թաղծութեանցը մէջն ալ բոլորովին անմիտիթար մնացած չէ, ու կենացը դառնութիւնները կը քաղցրա-  
ցընէ: Ի՞նանաստեղծներուն վերջին շունչն ալ բանաստեղծութիւնն եղած է. մա-  
հը շրթանցը վրայ նստած ատենն ալ՝ դեռ քերթողական տողերով կը թրթռայ: Պսածիս ստուգութեանը վրայ զքեզ համոզելու համար՝ քանի մը օրինակներ բե-  
րեմ հին ու նոր պատմիներու մէջ հանդիպած, ոմանց խօսքերն ալ դնելով:

Լ'զրիանոս կայսրը (Ճն. 76 մ. 117) մեռնելու ատեն իր հոգւոյն հետ փառաւոր դիմանութիւն մը ըրաւ, որուն Փոփ անգղիացի բանաստեղծը այնչափ հաւնած էր՝ որ բերան սորվեր էր, ու աղուոր թարգմանութիւն մ'ալ ըրաւ:

Լ'ուկանոս լատին քերթողը (38-65) էրոնի հրամանաւ երակները ծակած՝ արիւնը վագելու ատեն, մեռնելու մօտ իր Փարսաղէան դիւցազներգութենէն յար մար եկած կտոր մը կ'արտասանէր, որուն մէջ կարծես թէ իր այս ողորմելի մա-  
հը գուշակելով զբեր էր :

Այսպիսի մահ մը ունեցաւ նաև Պետրոնիոս բղեաշխ քերթողը՝ նոյն անգութ բռնաւորին հրամանաւը:

Փաթրի գաղղիացին մահուան դուռը հասած՝ այլաբանական տեսիլ մը շարադրեց:

Տէ-Պարոյ (1602-1673) երկար ատեն քնարը անաստուածութեան նուիրելէն վերջը, մահուան անկողնին վրայ՝ ուր ճշմարտութիւնը բացայայտ կ'երևայ մար-  
դուս, այս սքանչելի զղջական նուագը շինեց:

Ուզիղ են, Տէր, և ճշմարիտ են դատաստանկ քո Աստուած .

Այլ դու քաւիչ գոլ ախորժես քան դատաւոր մահացուաց .

Սակայն եղեռն անօրինիս այնքան շեղջեալ բարդ՝ ի բարդ՝

Զի ինձ ներեւ արդ արութեամբ՝ քում բարութեանդ ոչ է մարթ :